ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» Հունիսի 2020թ. N 196-Ա

Ք. Արմավիր

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետով հաստատված N 4 հավելվածի 6-րդ կետի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման գործընթացում միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության արժանացած ծրագրերի իրականացման, հսկողության, մշտադիտարկման և ավարտի փաստագրման նպատակով.

որոշում եմ՝

1. Ստեղծել մշտադիտարկման աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա.Հովհաննիսյանին)՝ ապահովել ոլորտային մասնագետներից բաղկացած մշտադիտարկման աշխատանքային խմբի կողմից սուբվենցիայի ծրագրերով կատարվող աշխատանքների ընթացքի, որակի համապատասխանության ուսումնասիրության այցելությունների իրականացումը՝ ամիսը 2 անգամ յուրաքանչյուր ծրագրի համար, և կատարված աշխատանքների մասին պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղար Ա. Հովհաննիսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 18.06.2020 13:28:38 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2020 թվականի հունիսի 18 -ի
N 196-2020 որոշման

ԿԱԶՄ
Մշտադիտարկման աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար՝ Ա. Հովհաննիսյան

Աշխատանքային խմբի անդամներ՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական
և սոցիալ-տնտեսական զարգացման
վարչության պետ՝ Վ. Մկրտչյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի զարգացման ծրագրերի,
զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ՝ Լ. Մուշեղյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության
և բնապահպանության վարչության պետ՝ Ա. Այվազյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության
վարչության պետի տեղակալ՝ Հ. Կուրղինյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի
բաժնի պետ՝ Ա. Հակոբյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության
վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար՝ Գ. Հովհաննիսյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության
վարչության գլխավոր ճարտարագետ-շինարար՝ Ռ. Երվանդյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության
վարչության գլխավոր ճարտարագետ՝ Ս. Թովմասյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի ֆինանսական
և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության
ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Պողոսյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի զարգացման ծրագրերի,
զբոսաշրջության և վերլուծության բաժնի ավագ մասնագետ՝ Հ. Հովհաննիսյան

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
գլխավոր քարտուղար՝ **Ա. Հովհաննիսյան**